ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 հունիսի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

74
(3105)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՐՑԻՆ ԼՈՒՐՔ Է ՄՈՏԵՆՈՒՄ

Չնայած նրան, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ամենօրյա ռեժիմով գրառումներ է անում, թե Կաթողիկոսը զավակ ունի, բայց Գարեգին Բ-ն որոշել է տուրք չտալ Փաշինյանի հայտարարություններին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հոգեւորականների շրջանում որոշել են այլեւս քիչ արձագանքել իշխանությունների վարկաբեկիչ հայտարարություններին՝ եկեղեցու, սրբազանների աշխարհիկ կյանքի մասին արված նրանց գռեհիկ խոսքերի վերաբերյալ: Բայց, արի ու տես, որ այս լռությունը չի հանգեցնելու նրան, որ իշխանությունները զուսպ լինեն, կամ նահանջեն: ՔՊ-ամերձ մեր աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանը ՔՊ վարչության վերջին նիստի ժամանակ, նախօրեին՝ ՔՊ նախաձեռնող նիստին, հստակ հայտարարել է, որ իրավապահները պետք է պարզեն, թե ինչ է կատարվում եկեղեցիներում, հոգեւորականների կյանքում, եւ թե Կաթողիկոսի կուսակրոնության խախտումը ինչպես պետք է պատժել:

Այսինքն՝ Փաշինյանը հստակ նշել է, որ իր թիմը պետք է այս հարցում վճռական լինի՝ նահանջ չի լինելու:

Իսկ եկեղեցում վերջնականորեն համոզմունք ունեն, որ սատանայի հետ չպետք է վարվել որեւէ կերպ. կլռեն:

Երկուշաբթի օրը՝ հունիսի 9-ին, կմեկնարկեն Ազգային ժողովի տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստերը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այդ օրը ԱԺ է գալու պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանը, որը պետք է ներկայացնի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Տեղեկացանք նաեւ, որ այդ օրը զեկույցներ կներկայացնեն ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը, կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը: Ի դեպ, այդ օրը խորհրդարան պետք է ներկայանա նաեւ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը: Մենք տեղեկացանք, որ Կառավարության մյուս գերատեսչության ղեկավարները մինչեւ հունիսի 11-ը կավարտեն բյուջեի կատարման հաշվետվությունները ներկայացնելը: Արդեն հունիսի 17-ի ԱԺ հերթական նիստում Կառավարության անդամները, որոնց կլիազորի ՀՀ վարչապետը, կներկայացնեն հաշվետվությունը խորհրդարանի ամբիոնից: Առաջինը ելույթ կունենա ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:



ԱՄՆ-ում ՀՀ ապագա դեսպանն ավելի շատ վարկեր ունի, քան եկամուտ: Համենայնդեպս այդ մասին են վկայում նրա պաշտոնական փաստաթղթերը. մինչդեռ Թահիրովում բոլորը տեսնում ու լսում են, թե ինչպես են նախարարի ընտանիքի անդամների գործերը օր օրի լավանում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱՄՆ-ում ՀՀ դեսպանի հավանական թեկնածուն ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, Ամերիկյան համալսարանի դասախոս Նարեկ Մկրտչյանն է: Նա նաեւ միակն էր, որ Փաշինյանի թիմից մասնակցել էր Դոնալդ Թրամփի երդմնակալությանը նվիրված երեկոյին: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե Նարեկ Մկրտչյանն ինչ է հայտարարագրել 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրում: Թեեւ Նարեկ Մկրտչյանը ծնվել է 1989 թվականին, սակայն, ըստ փաստաթղթերի, 1956 թվականից համատեղ սեփականությամբ ձեռք է բերել անհատական բնակելու տուն Արմավիրի Փարաքար համայնքում: Նախարար Մկրտչյանը հայտարարագրել է 2019 թվականին ձեռք բերված MERCEDES-BENZ մակնիշի մեքենա: Նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 6,1 մլն դրամ, որը տարեսկզբի համեմատ պակասել է գրեթե 2 մլն դրամով: Կանխիկ դրամական միջոցները կազմել է 2 մլն դրամ, որը տարեսկզբի համեմատ պակասել է 1,5 մլն դրամով: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 29 մլն 158 հազար դրամ, որից 21 մլն 522 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Եկամուտներից 1,6 մլն դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ամերիկյան համալսարանից, 1 մլն 464 հազար դրամը վարկ է «Ակբա կրեդիտ Ագրիկոլ» բանկից: Ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 46 մլն 542 հազար դրամ, որը անշարժ գույքի հիփոթեքի մայր գումարն է: Վարկերի մարմանը Մկրտչյանն ուղղել է 6 մլն 69 հազար դրամ: Հիշեցնենք, որ Նարեկ Մկրտչյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության արտաքին հարաբերությունների պատասխանատուն է, եւ «աշխարհը խալի է ոտի տակ» սկզբունքով՝ կուսակցական հարցերով ավելի շատ արտերկրում է լինում, քան նախարարի աթոռին: Ասվածի վկայությունը նրա համացանցային գրառումներն ու լուսանկարներն են:

Քննչական կոմիտեի չհրկիզվող պահարանից «անհետացած» 590 հազար դոլարը կիսատ է գտնվել: Գումարի հափշտակությունը, ըստ իրավապահների, կազմակերպել է հենց նույն ՔԿ-ում ժամանակավորապես պաշտոնավարող Գոռ Թադեւոսյանը: Ինքը՝ Գոռը, տվել է ինքնախոստովանական ցուցմունք՝ մի քայլով կարծես մի քիչ հեշտացնելով քննչական աշխատանքները: Մի քանի օր անց պարզվեց՝ գումարը գտնվել է, բայց 11 հազար դոլար պակաս է: Ո՞ւր է գումարը: Այս հարցով երեկ ԱԺ-ում պատգամավոր Թագուհի Թովմասյանը դիմեց ՔԿ նախագահ Արթուր Պողոսյանին, բայց վերջինս ասաց, թե տեղյակ չէ, գործը Հակակոռուպցիոն կոմիտեում է: Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Արթուր Նահապետյանն էլ հայտնեց՝ մեղադրյալի հարազատները հայտնել են իրենց, որ պատրաստվում են մարել այդ պակասող գումարը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՀԱՐՁԱԿՎԵԼ ԵՆ ՄԵՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԽՐԱՄԱՏԻ ՎՐԱ», ՍՐԲԱԶԱՆ

Armlur.am-ը զրուցել է Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի հետ պարզելու համար, թե ինչու են լարվել իշխանության եւ եկեղեցու փոխհարաբերությունները:



Բագրատ Սրբազանը խոսել է Նիկոլ Փաշինյանի վերջին սկանդալային հայտարարությունների, Կաթողիկոսի զավակ ունենալու, ինչպես նաեւ իրավապահ մարմինների կողմից ինչ-որ նյութերի հավաքագրման մասին:

-Սրբազան, 2018 թվականին, երբ Նիկոլ Փաշինյանը եկավ իշխանության, պայքար սկսեց նախկին թալանչիների, սատանաների որս հայտարարեց, այնուհետեւ եկեղեցու դեմ սկսեց գործել: Հետո՝ մի առ ժամանակ, մոռացվեց ամեն ինչ, իսկ ահա արդեն 4-5 օր է Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան տարբեր գրառումներով հայտարարում է, որ եկեղեցին պետք է բացատրություն տա, թե ինչով է զբաղված եւ այլն: Ինչո՞ւ ու նորից նա հիշեց եկեղեցու մասին: Ինչու՞ կառավարություն-եկեղեցի փոխհարաբերությունները հաշտ չեն:

-Կարծում եմ՝ արդեն բազմաշերտ վերլուծություններ արվել են տարբեր հարթակներում: Մի բան շատ հստակ է, որ այս շարժումը սկսել է Կովկասի մուսուլմանների հոգեւոր պետի Իլհամ Ալիեւի հրահանգով: Մեկնարկը ինքն է տվել:

-Ո՞րն է նպատակը:

-Ես դեռ 2023 թվականին մի առիթով ասել եմ, երբ մեզ համարում էին ռեւանշիստներ, եւ ես ասել եմ, որ այո, ես ռեւանշիստ եմ եւ արդարություն եմ պահանջում: Իմ մտքից վրեժը դուրս չի գալու: Ես պատասխանատու եմ իմ բաժնով, իմ չափով: Եվ ադրբեջանական լրատվամիջոցները սկսեցին տարածել՝ ռեւանշիստ, հիմա Փաշազադեն է նույնն ասում: Երբ կառավարության նիստի ժամանակ չուլանացման մասին խոսեց չարիքը, դրանից հետո եղան արձագանքներ, հոգեւորականները որսացին: Ու այստեղից սկսվեց ամբողջ գործընթացը: Ինքը, իր կինը սկսեցին գործընթաց՝ գերագույն մաֆիոզ, «մանկապիղծներ» եւ մնացած մյուս պատմություններով: Եվ սրան զուգահեռ՝ ամբողջ ադրբեջանական մամուլը ողողվեց: Կարծեք, հենց այդ հրապարակումներին էին սպասում: Ուրեմն սա ինչ է նշանակում. հարձակվել են մեր երկրի, մեր պետության, մեր ինքնության, մեր գոյության վերջին խրամատի վրա: Ուզում են ստորագրել իբր Խաղաղության համաձայնագիր. իրենց ցանկությունը շատ մեծ է՝ այդ թուղթը ստորագրելու, եւ իրենք ամեն ինչի կգնան: Նրան հրահանգ են տվել, որ այդտեղ խնդիր ես ունենալու:

-Սրբազան, բայց այս ընթացքում եկեղեցին որեւէ արտառոց հայտարարություններով հանդես չի եկել: Կարելի է ասել՝ որեւէ ձեւով չի խոչընդոտել: Ինչու՞ իրենք որոշեցին կրկին թիրախավորել եկեղեցուն: Ինչ արթնացավ իրենց մեջ, ի՞նչ ներքին ինֆորմացիա ունեն:

-Ես ներքին ինֆորմացիա չունեմ, սա ժամանակագրական շարահարություն է: Գնացին Ալբանիա, Փաշազադեն հայտարարություն արեց, որից հետո ամբողջ շղթան շարունակվեց: Այս մարդուն թելադրում են անել ամեն ինչ, ինքն էլ սիրով կատարում է:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՆԱԽԱՐԱՐԻՆ

ՏՈՒԳԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ԲԱՆԱՎՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի մասով վարույթ է հարուցել, ապա նրան ազատել վարչական պատասխանատվությունից եւ բանավոր դիտողություն է տվել:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հիմք ընդունելով ArsLur.as-ի 2024 թվականի հուլիսի 10-ի «Ինչպես է ՀՀ Ֆինանսների նախարարը մեկ տարում 1 մլն դոլար վարկը» եւ Civilnet.as կայքի 2024 թվականի հուլիսի 23-ի «Ֆինանսների նախարարի հայտարարագրում՝ բազմաթիվ անճշտություններ» վերտառությամբ հրապարակմամբ հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքները, իրականացրել է ՀՀ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի՝ 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, 2021, 2022, 2023 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծություն, որի արդյունքում, ի թիվս այլնի, Հանձնաժողովը հայցել է պարզաբանումներ եւ հիմնավորող փաստաթղթեր՝ 15/09/2004 թվականից Վահե Հովհաննիսյանին պատկանող՝ Երեւանում գտնվող բնակարանի վերաբերյալ, որի տվյալները իր հայտարարագրի «Անշարժ գույք» բաժնում չհայտարարագրելու, ինչպես նաեւ 2021, 2022 եւ 2023 թվականների տարեկան հայտարարագրերի «Էլեկտրոնային հաշիվների եւ կրիպտոարժույթ» բաժնում հայտարարագրված կրիպտոարժույթի մնացորդների միջեւ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ:

2025 թվականի հունվարի 10-ին Հանձնաժողով է մուտքագրվել Վահե Հովհաննիսյանի պարզաբանումը:

Պարզ է դարձել, որ հայտարարագրում առերեւույթ առկա են սխալ կամ ոչ ամբողջական ներկայացված տվյալներ, մասնավորապես «Անշարժ գույք» բաժնում հայտարարագրված չեն տվյալներ Երեւանում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ, իսկ «Էլեկտրոնային հաշիվներ եւ կրիպտոարժույթ» բաժնում հայտարարագրված չեն տվյալ տարվա սկզբի դրությամբ առկա կրիպտոարժույթի վերաբերյալ:

Մի շարք ուսումնասիրություններից, պարզաբանումներից եւ հրապարակումներից հետո Հանձնաժողովը որոշում է կայացրել Վահե Հովհաննիսյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

Հանձնաժողովը որոշել է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Վահե Հովհաննիսյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ 2022 եւ 2023 թվականների պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի տարեկան հայտարարագրերի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԿՄԵԿՆԵՆ ՖՐԱՆՍԻԱ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) տարեկան նստաշրջանի երրորդ մասի աշխատանքներին մասնակցելու համար ԱԺ պատգամավորները 2025 թվականի հունիսի 22-27-ը կմեկնեն Ստրասբուրգ՝ Ֆրանսիայի Հանրապետություն:

ԵԽԽՎ գործուղվելու են Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը, ԵԽԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության անդամներ՝ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Գեւորգյանը, Արուսյակ Ջուլհակյանը, Արմեն Ռուստամյանը, Հայկ Մամիջանյանը, Հռիփսիմե Գրիգորյանը, ինչպես նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջխորհրդարանական կապերի եւ եվրահինտեգրման բաժնի գլխավոր մասնագետ Ալվինա Սանթրոսյանը:

ՊՈՂՈՍՅԱՆԸ ԱԿՆԿԱՅՏՈՐԵՆ ԱՆՀԱՐՄԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԵՑ

Հունիսի 5-ին Ազգային ժողովում տեղի ունեցած բյուջետային լսումների ընթացքում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը հայտնվեց բարդ իրավիճակում: Հնչեցին մի շարք սուր հարցադրումներ, որոնց մեծ մասին ՔԿ ղեկավարը այդպես էլ չկարողացավ համարժեք պատասխաններ տալ:

Խորհրդարանական ընդդիմությունը, մասնավորապես պատգամավորներ Ագնեսա Խամոյանը եւ Թագուհի Թովմասյանը, բարձրացրին քննչական մարմնի անարդյունավետ աշխատանքի, մի շարք աղմկահարույց գործերի կասեցման եւ հենց իր՝ Պողոսյանի՝ հնարավոր կոռուպցիոն անցյալի վերաբերյալ հարցեր: Թովմասյանը հատկապես հիշեցրեց, որ դեռ 2024-ի նոյեմբերին վարչապետ Նիկոլ Փաշինյանն էր ակնարկել Արթուր Պողոսյանի հնարավոր ներգրավվածությունը կոռուպցիոն գործարքներում՝ պահանջելով պարզաբանում:

Խիստ հարցադրումների պայմաններում Պողոսյանն ակնհայտորեն անհարմար իրավիճակում էր:

Լսումներից հետո, երբ փորձ արվեց նրանից լրացուցիչ պարզաբանումներ ստանալ, արդեն ԱԺ միջանցքում Պողոսյանը լրագրողներին հայտարարեց, որ իրեն վատ է զգում, եւ ի վիճակի չէ հարցերին պատասխանել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՎԱԾՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ

Իսրայելի պաշտպանության ուժերը հինգշաբթի գիշերը՝ Իդ ալ-Ադհայի նախօրեին, ավիահարվածներ են հասցրել Բեյրութի հարավային արվարձաններին: Իսրայելական կողմը հայտնել է, որ թիրախավորվել է «Հեզբոլլահ»-ի անօդաչու թռչող սարքերի արտադրամասը:

Հարվածներից առաջ տեղի բնակչությանը տարհանման նախազգուշացում էր արվել: Լիբանանի վարչապետ Նավաֆ Սալամը եւ նախագահ Ջոզեֆ Աունը խստորեն դատապարտել են հարվածները՝ որակելով դրանք որպես միջազգային համաձայնագրերի խախտում:

Հարձակումը տեղի է ունեցել Իսրայելի եւ զինված խմբավորման միջեւ վերջին վեց ամիսների ընթացքում գործող հրադադարի պայմաններում: Կատարվածի վերաբերյալ «Հեզբոլլահ»-ից մեկնաբանություն չի եղել:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Ռուսաստանի Դոմոդեդովո եւ Ժուկովսկի օդանավակայաններում սահմանափակումներ են մտցվել չվերթների ընդունման եւ մեկնման համար: Այս մասին հայտնել է Ռոսավիացիայի ներկայացուցիչ Արտյոմ Կորենյակոն:

«Քաղաքացիական օդանավերի թռիչքների անվտանգությունն ապահովելու նպատակով Դոմոդեդովո եւ Ժուկովսկի օդանավակայաններում ժամանակավոր սահմանափակումներ են մտցվել դրանց ընդունման եւ մեկնման համար»,- ասված է հաղորդագրության մեջ: 40 րոպե անց սահմանափակումներ են մտցվել նաեւ Վնուկովո օդանավակայանում: Մոսկվայի ժամանակով 5:17-ին Կորենյակոն հայտնել է Դոմոդեդովոյում, Ժուկովսկիում եւ Վնուկովոյում սահմանափակումների վերացման մասին: Չվերթների ընդունման եւ մեկնման սահմանափակումներ են մտցվել նաեւ Կալուգայի եւ Սարատովի օդանավակայաններում:

Նույն գիշեր Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը հայտնել էր մայրաքաղաք ուղղություն վերցրած ինը անօդաչու թռչող սարքերի ոչնչացման մասին ՀՕՊ ուժերի կողմից:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ադրբեջանի տարածքում հայտնված երկու պատանիների հարցով Միջազգային Կարմիր Խաչի Կոմիտեին դիմումներ դեռ չեն ներկայացվել: Այդ մասին «Սպուտնիկ Արմենիա»-ին ասել է Հայաստանում ԿԽՄԿ-ի հաղորդակցության ծրագրերի ղեկավար Զարա Ամատունին:

«Մեր ծառայությունները հասանելի են որպես չեզոք միջնորդ, սակայն այս պահին կարող ենք միայն նշել, որ հետեւում ենք այս թեմայով հրապարակվող տեղեկատվությանը, եւ ներկայումս մեր կողմից լրացուցիչ տեղեկություն չկա», - ասել է Ամատունին:

Նրա խոսքով՝ կազմակերպությունը, իր լիազորությունների շրջանակներում, կարող է դիմել մյուս կողմին՝ օգտագործելով չեզոք միջնորդի իր հնարավորությունները՝ այդ անձանց իր տարածքում գտնվելու փաստի հաստատման համար: Ամատունին հիշեցրել է Բաքվում Կարմիր Խաչի դիրքորոշման եւ ադրբեջանական կողմի գրասենյակը փակելու ցանկության մասին: Այս առումով նա չի կարող վստահորեն ասել, որ կազմակերպության ներկայացուցիչները կարողացել են այցելել մյուս կողմում հայտնվածներին:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ԴԵՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԵՂԵԼ

«Ադրբեջանական կեղծ մանիպուլյացիան բացահայտվեց. հայ գերիների դեմ հայտարարություն չի եղել». այս մասին հայտնել է ԱԺ պատգամավոր, մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

«2025 թվականի մարտի 6-ին ադրբեջանական մի շարք լրատվամիջոցներ տեղեկություններ տարածեցին այն մասին, թե իբր Լատվիայի Հանրապետության Սեյմի մի շարք պատգամավորներ փետրվարին հանդես են եկել հայտարարությամբ՝ վերաբերվող Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետեւանքով գերեվարված անձանց, ռազմաքաղաքական գերիներին, այդ թվում՝ ՀՀ քաղաքացի, գործարար, Արցախի նախկին պետական նախարար Ռուբեն Վարդանյանին:

Ըստ այդ աղբյուրների՝ լատվիացի պատգամավորները Վարդանյանին ներկայացրել են որպես «միջազգային վտանգ», «Պուտինի հովանավոր» եւ պահանջել խիստ պատիժ՝ ընդգծելով իբր «միջազգային հանրության դատապարտումը»:



Տես լուսանկար 1.

Քանի որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը որեւէ պաշտոնական արձագանքով հանդես չեկավ այս առիթով, իսկ թեման չափազանց կարեւոր է՝ հատկապես ռազմագերիների հարցում, ես՝ որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր եւ Հայաստան-Լատվիա խորհրդարանական բարեկամության խմբի անդամ, որոշեցի անձամբ պարզել ներկայացված տեղեկության իսկությունը:

Տես լուսանկարներ 2, 3, 4



NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA
MEMBER OF STANDING COMMITTEE ON PROTECTION OF HUMAN RIGHTS AND PUBLIC AFFAIRS

19, M. Baghramyan Ave., 0095, Armenia

«28» April 2025

MEMBER OF THE SAEIMA OF THE REPUBLIC OF LATVIA
MR. EDGARS TAVARS

Dear colleague,

I am writing to you from the National Assembly of the Republic of Armenia, in my capacity as a Member of Parliament and a member of the Armenia-Latvia Parliamentary Friendship Group, as well as a sincere advocate for strengthening the relations between our two countries.

Recently, I learned that you and some of your colleagues initiated a statement in February 2025 (attached herewith) concerning Armenian prisoners of war captured after the war in the Nagorno-Karabakh region, and in particular regarding Armenian businessman and citizen of the Republic of Armenia, Ruben Vardanyan. The content of this statement appears to be predominantly pro-Azerbaijani. I fully understand that in certain matters, different perceptions or misunderstandings may arise, often due to incomplete information. Through this letter, I seek to initiate an open and cooperative dialogue in order to:

- Understand whether this document genuinely exists, or whether it is fake, (I found it circulating in Azerbaijani media outlets);
- Clarify whether all the details of the document's content were fully presented to you prior to your endorsement;
- Discuss how we can contribute to correcting any possible misunderstandings in the spirit of mutual trust between our friendly countries, Armenia and Latvia.

I would be truly grateful if you could comment on your motives and objectives for participating in this initiative.

Thank you in advance for your attention and willingness to engage. I remain open to cooperation at all times.

Chairperson of the Standing Committee on Protection of Human Rights & Public Affairs of the National Assembly of RA,
Whose powers have been illegally terminated, nonpartisan MP
Member of the Armenia-Latvia Parliamentary Friendship Group

TAGUHI TOVMASYAN

Դիմելով Լատվիայի Սեյմի մի շարք պատգամավորների, որոնց անունները ներկայացված էին ցանկում՝ ստացա միանշանակ պատասխաններ, որոնք հստակ հերքում են ադրբեջանական լրատվամիջոցներում հրապարակված տեղեկությունները:

Լատվիայի Սեյմի պատգամավոր Էդգարս Տավարսը ի պատասխան իմ գրավոր նամակի, տեղեկացրեց, որ նման հայտարարության կամ փաստաթղթի առկայությունը բացակայում է:

Տես լուսանկար 5.

Իսկ Լատվիայի Սեյմի Հայաստանի հետ համագործակցության խթանման պատգամավորների խմբի ղեկավար Գունարս Կուտրիսը պաշտոնապես նշեց.

«Տեղեկացնում եմ, որ նման ստորագրություններ եւ նամակ չեն արվել եւ կեղծիք են, որի վերաբերյալ հետաքննություն է սկսվել: Իմ եւ Հայաստանի խորհրդարանի հետ համագործակցության խթանման պատգամավորների խմբի անունից արտահայտում եմ ափսոսանք նման իրավիճակի համար»:

Honourable
Ms Tovmasyan,

Let me to express, that according to review, it has been confirmed absence of such a document.

Respectfully,
Edgars Tavars

LATVIJAS REPUBLIKAS SAEIMA

Frakcija "APVIENOTAIS SARAKSTS – Latvijas Zaļā partija, Latvijas Reģionu Apvienība, Liepājas partija"

E-pasts: edgars.tavars@saeima.lv
www.saeima.lv

Տես լուսանկար 6.

Ստացված պաշտոնական պարզաբանումները վերահաստատում են, որ այսպես կոչված «հայտարարությունը» իրականում գոյություն չունի, այն կեղծ տեղեկություն է՝ ադրբեջանական կողմի կողմից տարածված:

Dear Mrs. Tovmasyan!

I would like to inform you that I have ordered the parliamentary security structures to assess this case. I also inform you that such signatures and the letter were not made and are a forgery, for which an investigation has been initiated. On my own behalf and on behalf of the Group of Deputies for the Promotion of Cooperation with the Parliament of Armenia, I express my regret for such a situation.

Sincerely,
Gunārs Kūtris
Head of the Group of Deputies for the Promotion of Cooperation with the Parliament of Armenia of the Saeima of Latvia

Հատկանշական է, որ նշյալ հայտարարությունը վերաբերել է ոչ միայն Վարդանյանին, այլեւ մի շարք հայ ռազմագերիների, որոնց ազատությունը եւ իրավունքների պաշտպանությունը մեր պետության սահմանադրական բարձրագույն պարտականություններից է: Ցավով պետք է արձանագրել, որ ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչությունը ոչ միայն չարձագանքեց այս կեղծ տեղեկատվությանը, այլեւ չձեռնարկեց անհրաժեշտ քայլեր՝ ճշմարտությունը ներկայացնելու եւ պետական արժանապատվությունը պաշտպանելու համար:

Ռազմագերիների հարցը չպետք է լքվի արտաքին քաղաքական օրակարգից: Եվ հենց այդ բացը լրացնելու նպատակով եմ ձեռնարկել այս կապն ու պարզաբանումները՝ գործելով բացառապես սեփական նախաձեռնությամբ:

Այս փաստը եւս մեկ անգամ ցույց է տալիս, թե ինչպես է Ադրբեջանը շարունակում կիրառել ապատեղեկատվությունն ու կեղծ միջազգային ռեակցիաների «սիմուլյացիան»՝ միջազգային հանրությանը մոլորեցնելու եւ իր ռազմաքաղաքական օրակարգը պարտադրելու նպատակով: Եվ թե ինչպես է Նիկոլ Փաշինյանի իշխանությունը արտաքին քաղաքական օրակարգից փաստացի հանել հայ գերիների հարցը: Երեկ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հայտեց, որ COP29-ի շրջանում է (մեկ տարի առաջ) քննարկվել գերիների հարցը՝ անպտուղ,- նշել է Թովմասյանը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՎՔԵՐ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՄՈԼՈՐՎԱԾ ՏՂԱՆԵՐԸ

Ազգային անվտանգության ծառայությունը երեկ տեղեկացրեց, որ Սյունիքի մարզի երկու անչափահաս բնակիչներ մոլորվել են եւ հայտնվել Ադրբեջանի տարածքում:

ArmLur.am-ին Տեղ համայնքի բնակիչները պատմեցին, որ սահմանը հատած երկու անչափահասներից մեկը Սյունիքի մարզի Արավուս գյուղից է, մյուսը՝ Տեղից:

ԱԱԾ-ն հայտնել էր նաեւ, որ ստացված տվյալների համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի բնակիչներ Կարեն Արմենի Ջհանգիրյանը (ծնված 27.06.2007թ.) եւ Անդրեյ Արմենի Գյագունցը (ծնված 13.01.2008թ.) 2025 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 01:20-ի սահմաններում, Սյունիքի մարզի Արավուս գյուղի հարակից հատվածում՝ տեղանքում մոլորվելու հետեւանքով հայտնվել են Ադրբեջանի տարածքում: Ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ քաղաքացիների գտնվելու վայրը պարզելու եւ նրանց անվտանգ վերադարձն ապահովելու ուղղությամբ:

Բնակիչները պատմեցին, որ կեսգիշերն անց ժամը 00:00-ից 01:00-ի հատվածում տղաները ձիերը նստել են՝ հանդից անասուններին բերելու նպատակով եւ արդյունքում մոլորվել են: Արոտավայրերից ադրբեջանական դիրքերը մետրերի հեռավորության վրա են, այդ պանտճառով էլ



տղաները մոլորվել են եւ հայտնվել են Ադրբեջանի տարածքում: Այժմ նրանց գտնվելու վայրն անհայտ է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐՈՆԻԿՈՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Բացահայտվել է 129 հանցագործություն, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝ 24 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու, 19 դեպք՝ թմրանյութի հայտնաբերման, 11 դեպք՝ խարդախության, 10 դեպք՝ փաստաթղթի կեղծիքի, 8 դեպք՝ ֆիզիկական ներգործության, 7 դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու, 6-ական դեպք՝ հոգեկան ներգործության ու թմրամիջոց պարունակող բույսեր աճեցնելու, 4 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության, 3-ական դեպք՝ զենք-զինամթերքի առգրավման ու սառը զենքի հայտնաբերման, 2-ական դեպք՝ շորթման, համակարգչային հափշտակության եւ անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու:

Բացահայտվել են նաեւ բնակարանային գողության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության, թմրանյութի իրացման, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայություններ մատուցելու, ինքնիրավչության, ուրիշի գույքն ապօրինի օգտագործելու եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է՝ անձնական ունեցվածքի գողության 3 դեպք, ավտոմեքենայի գողության 1 դեպք:

Հայտնաբերվել է 8 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 2-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 6 դեպք:

ՃՏՊ վիճակագրություն

Անցած 1 օրում գրանցված 4 ավտովթարի հետեւանքով 1 մարդ զոհվել է, 3-ը՝ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԽՆԴԻՐ ՉԻ ՏԵՄՆՈՒՄ

Ես ադտեղ որեւէ խնդիր չեմ տեսնում: Այս մասին նշել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանը՝ անդրադառնալով նրան, որ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը հայտարարեց, որ «Կրթվելը նորաձեւ է» միջոցառումն իրականացվում է բյուջեի հաշվին:

Հարցին՝ դա ինչքանո՞վ է բխում մեր պետական շահերից, նա պատասխանեց. «Ես ձեր հարցադրումներին պատասխանում եմ հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթների շրջանակում, ես չեմ կարող գործառույթների շրջանակից դուրս այլ մեկնաբանություններ կամ պատասխաններ հնչեցնել: Եթե հարցադրումը վերաբերում է նրան, թե այդտեղ արդյոք կա կոռուպցիոն դրսեւորումներ, ես պատասխանում եմ, որ առերեւույթ որեւէ կոռուպցիոն դրսեւորում ձեր նկարագրածում չեմ տեսնում»:

ՀՐԱՄԱՆ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի խնդիրների իրականացման, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով Կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանը երեկ հրաման է ստորագրել խորհրդակցական մարմին (Կոլեգիա) ստեղծելու մասին: Նույն հրամանով հաստատվել է նաեւ խորհրդակցական մարմնի գործունեության կարգը: Այս մասին հայտնել են հակակոռուպցիոն կոմիտեից:

Կոլեգիայի ստեղծմամբ Հակակոռուպցիոն կոմիտեն կապահովի գործունեության առավել հրատապ եւ արդիական հիմնահարցերի քննարկումը, դրանց արագ եւ համարժեք արձագանքումը:

Կոլեգիայի աշխատանքները կազմակերպվելու են նիստերի միջոցով, որոնք հրավիրվելու են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից՝ ըստ անհրաժեշտության կամ կոլեգիայի անդամների կողմից՝ ձայների մեկ երրորդի նախաձեռնությամբ: Կոլեգիայի նիստերը կարող են անցկացվել մասնակիցների ընդլայնված կազմով, այդ թվում՝ Կոմիտեի այլ ծառայողների կամ պետական այլ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՆՀԱՐՄԱՐ ՀԱՐՑԵՐ

Երեկ «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան զեկույցը քննարկող մշտական խորհրդարանական հանձնաժողովների համատեղ նիստերի ժամանակ, «Հայաստան» ընդդիմադիր դաշինքի պատգամավոր Ագնեսա Խամոյանը Քննչական կոմիտեի ղեկավար Արթուր Պողոսյանին այս տարվա ապրիլին Էջմիածնի 22-ամյա բնակչի դաժան սպանության գործի վերաբերյալ մի քանի «անհարմար» հարցեր ուղղեց:

Մասնավորապես, նա քննադատեց քննիչների աշխատանքը՝ կասկածի տակ դնելով նրանց մասնագիտական որակները:

«Փոխանակ տղային մինչեւ մահ ծեծի ենթարկած անձանց գտնելու եւ պատասխանատվության ենթարկելու, քննիչները հարցաքննության են կանչել նրա հարազատներին: Նրանք սկսել են հարցեր տալ, որոնք ոչ մի կերպ կապված չեն քրեական գործի հետ, օրինակ՝ «ինչպիսի՞ հարաբերություններ է ունեցել զոհը ընտանիքում»: Բացի այդ, այս հարցաքննությունների ժամանակ իրավապահ մարմինների աշխատակիցները սպանված տղամարդու ընտանիքի անդամներին հարցրել են, թե արդյոք նրանք իսկապես չգիտեն, թե ում որդիներն են ներգրավված այս ամենում», - ասաց Խամոյանը՝ ակնարկելով քննիչների կողմից գործը թաքցնելու փորձերին:

Ի պատասխան՝ Պողոսյանը նախ հանդիմանեց Խամոյանին քրեական գործի բոլոր նրբությունները չիմանալու համար՝ նշելով, որ քննիչների պարտականությունն է տալ բազմազան հարցեր՝ տեղի ունեցածի բոլոր հանգամանքներն ու դրդապատճառները պարզաբանելու համար: Քննչական կոմիտեի ղեկավարի խոսքով՝ այս գործում կան մեղադրյալներ՝ որոշակի կարգավիճակով: Սակայն նա չբացատրեց, թե ինչ կարգավիճակի մասին է խոսքը:

Ըստ որոշ լրատվամիջոցների՝ 22-ամյա Պարգեւ Հակոբյանին դաժանորեն ծեծել են «Գոճի» մականունով քրեական հեղինակություններից մեկի որդիները: Դեպքը տեղի է ունեցել ապրիլի 22-ին: Պատճառն այն էր, որ Հակոբյանի մեքենան ցեխ էր ցողել քրեական հեղինակության որդիների մեքենայի վրա: Հետագայում նրանք գնացել են նրա մոտ՝ իրավիճակը կարգավորելու: Երիտասարդը ծեծի է ենթարկվել, որից հետո Հակոբյանը կոմայի մեջ է ընկել եւ 13 օր անց մահացել:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 5-ից 6-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵՏԱՁԳՎԵԼ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մեր թղթակիցը տեղեկատվական հարցում է արել. «Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ Տավուշի մարզում 2023 թ. սուբվենցիոն ծրագրերից 2 ծրագիր տեղափոխվել է 2024թ.: 2024թ.-ի սուբվենցիոն ծրագրերից 10 ծրագիր տեղափոխվել է 2025թ.: Մարզպետարանում նաեւ արդարացել են՝ նշելով. «Նշված ծրագրերը չեն համարվում ժամկետանց, կազմված են ենթածրագրերից, որոնց մի մասը ավարտվել է, մնացածը գտնվում է իրականացման տարբեր փուլերում»: Սպասենք մարզպետի պատասխանին, որի մասին անպայման կտեղեկացնենք:

ԱՆԱՄՆԱՖԵՐՄԱ ԵՆ ՆՎԵՐ ՍՏԱՑԵԼ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկանում ենք, որ Դիլիջանի համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝Սերգեյ Գրիշայի Թամամյանի կողմից Դիլիջան համայնքի գ. Հաղարծին, 5-րդ փողոց 109/1 անասնաշենքն իր սպասարկման 0.01587 հա հողամաս որպես Դիլիջան համայնքին նվիրատվություն ընդունելու համաձայնություն տալու վերաբերյալ:

Մայիսի 7-ին Դիլիջան համայնքի ավագանին որոշել է համաձայնություն տալ Սերգեյ Գրիշայի Թամամյանի կողմից, որպես Դիլիջան համայնքին նվիրատվություն Դիլիջան համայնքի գ. Հաղարծին, 5-րդ փողոց 109/1 անասնաշենքն իր սպասարկման 0.01587 հա հողամասով ընդունելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ինչի՞ դիմաց է Սերգեյ Թամամյանը անասնաֆերման՝ կից 1587քմ մակերեսով հողամասով, նվիրել Դիլիջան համայնքին: Դիլիջան համայնքի ՔՊ-ական, անձնական գործում իր սեռն «արու» գրած Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը եւ համայնքապետարանն ինչ են անելու նվեր ստացած անասնաֆերման, դրա միջոցով անասնաբուծությամբ եւ անասնապահությամ՛բ են զբաղվելու.....:

ԱՆՏԵՂՅԱԿՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել՝նրանից հարցնելով. «Տավուշի մարզում ներկայում քանի՞ հացահատիկահավաք կոմբայն կա, դրանից քանի՞սը՝ ո՞ր համայնքում, եւ քանի՞սն են տեխնիկապես սարքին»: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմում հացահատիկահավաք կոմբայնների հաշվառում չի իրականացվում: Առաջարկում ենք դիմել համայնքներին»:

Բա ինչո՞ւ է Տավուշի մարզպետի աշխատակազմում գործում գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչությունը, ինչո՞ւ այդ վարչությունը չի կապ չունի մարզի 4 համայնքապետարանների հետ, որպեսզի իմնանա, թե համայնքներում հացահատիկահավաք քանի կոմբայն կա, դրանցից քանիսն է տեսխնիկապես սարքին՝ քանիսը՝անսարք: Ո՞ւր մնաց Հայաստանի պարենային անվտանգության ապահովման հացահատիկի բաղադրիչը: Տավուշի մարզպետի ու իր աշխատակազմի նման անտեղյակության, անտարբերության հետեւանքով է, որ Տավուշի մարզում հացահատիկ մշակելու ծավալները տարեցտարի կրճատվում են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԿԴԱԴԱՐԵՑՆԵ՞Ն ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Արցախցիների նախաձեռնությամբ մարտի 30-ին տեղի ունեցած մեծ հանրահավաքից հետո ձեւավորվեց Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհուրդը, որն էլ հանձն առավ զբաղվելու բռնի տեղահանված արցախցիների իրավունքները վերականգնելու եւ մի շարք սոցիալական խնդիրներին լուծում տալու խնդրով:



Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհրդի վրան-շտաբից գրասենյակային պայմանների տեղափոխվելով Խորհուրդը շարունակում էր զբաղվել բռնի տեղահանված մեր հայրենակիցների խնդրով: Ինչպես Խորհուրդն է հայտնում, ստեղծված փորձագիտական աշխատանքային խմբերը բանակցություններ են վարում ՀՀ կառավարության ներկայացուցիչների հետ՝ բնակարանային ապահովման, սոցիալական աջակցման, զբաղվածության եւ այլ հարցերի շուրջ:

Հաշվի առնելով ընթացիկ գործընթացները եւ որոշ տեխնիկական խնդիրներ՝ Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհրդին չի հաջողվել անցկացնել նախատեսվող հանրային իրազեկման հավաքը:

Խորհուրդը հայտնում է, որ փորձագիտական խմբի կողմից ներկայացված առաջարկներից կառավարության ներկայացուցիչների կողմից նախնականորեն մասնակի կամ ամբողջապես ընդունվել են հետեւյալները.

«Խորհրդի առաջարկը - «Տարբեր կետերում շահառուների մի շարք ցուցակների հղում անելու փոխարեն ստեղծել հնարավորություն վերանայելու եւ ճշգրտելու բռնի տեղահանված անձանց շտեմարանը, այդ թվում՝ քննարկելու կուտակված դիմումները եւ ստանալու նոր դիմումներ՝ մեկ միասնական եւ ճշգրիտ շտեմարան ձեւավորելու նպատակով պետական լիազոր մարմնում»:

Կառավարության արձագանքը - Ներկայացված խնդիրների կարգավորման նպատակով առաջիկայում ստեղծվելու է միջգերատեսչական հանձնաժողով՝ Ծրագրին դիմած եւ շահառուի կարգավիճակ չստացած դիմումատուների անհատական դեպքերն ուսումնասիրելու համար: Այս նպատակով ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշման մեջ նախատեսվում է կատարել լրացումներ:

Խորհրդի առաջարկը - «Առաջին փուլի շահառու համարել այն ընտանիքներին, որոնք ի լրումն ծրագրով նախատեսված հավաստագրի՝ անշարժ գույքի արժեքի 20% չափով հավելյալ հիփոթեկային վարկ կստանան, կամ բնակարան ձեռք կբերեն կամ բնակելի տուն կկառուցեն 2-րդ եւ 3-րդ հավելվածների բնակավայրերում»:

Կառավարության արձագանքը - «Նախատեսվում է առաջիկայում Ծրագրին դիմելու հնարավորություն ընձեռել բոլոր թիրախային խմբերին՝ անկախ ընտանիքում անչափահաս երեխաների թվից եւ այլ խոցելի խմբերին պատկանող անձանց առկայությունից:

Խորհրդի առաջարկը - Հրաժարվել ընտանիքի ամբողջ կազմին պետական աջակցությունից զրկելու մոտեցումից՝ աջակցության դադարեցումը կիրառելով միայն ծրագրի պայմանները խախտած անձի նկատմամբ»:

Կառավարության արձագանքը - Ներկայում քննարկվում է առաջարկի կիրառման մեխանիզմը, մասնավորապես՝ նախատեսվում է Ծրագրի պայմանները խախտած անձանց հասանելիք գումարի չափով հնարավորություն ընձեռել ընտանիքին վճարել վարկի ամսական մարումները: Այս դեպքում աջակցությունը կշարունակվի, հակառակ դեպքում՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կանցնի պետությանը:

Խորհրդի առաջարկը - «Թույլատրել, որ շահառուները կարողանան միավորել իրենց հավաստագրերը բնակարանային ապահովության պետական աջակցության այլ ծրագրերով ստացած հավաստագրերի հետ, ինչպես նաեւ բնակարանային ապահովության պետական աջակցության այլ ծրագրերի հետ համատեղելու կետում ավելացնել նաեւ երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան ծրագիրը»:

Կառավարության արձագանքը - Գործող կարգով մասնակիորեն նախատեսված է այս դրույթը, մասնավորապես՝ եկամտահարկի վերադարձի եւ երեխա ունեցող ընտանիքների բնակապահովման ծրագրի մասով: Այստեղ նախատեսվում է հնարավորություն ընձեռել նաեւ օգտվելու բնակարանային ապահովման պետական աջակցության այն ծրագրերից, որոնցում համապատասխան սահմանափակումներ նախատեսված չեն եւ որոնց պայմանները չեն հակասում Ծրագրի հիմնական պայմաններին:

Խորհրդի առաջարկը - «Հավաստագիր տրամադրել հայտ ներկայացրած ընտանիքի դիմելու օրվա դրությամբ առկա բոլոր անդամներին՝ այդ թվում նորածիններին»:

Կառավարության արձագանքը - Քննարկվում է 2026 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ծնված երեխաներին Ծրագրի շահառու համարելու հարցը, եթե ընտանիքը հավաստագիրը կստանա մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

Խորհրդի առաջարկը - «Սահմանել, որ բանկերի կողմից շահառուների վարկունակության գնահատման ժամանակ հավաստագրի գումարը չհաշվարկվի որպես պարտավորություն, քանի որ այն պետք է մարվի կառավարության կողմից»:

Կառավարության արձագանքը - Ներկայացված խնդիրը քննարկվել է գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ, որին ի պատասխան հավելյալ վարկավորում իրականացնող բանկերը հավաստիացրել են, որ հավելյալ վարկ տրամադրելու դեպքում վարկունակության գնահատումն իրականացվում է բացառապես հավելյալ վարկի չափով: Ուստի նման խնդիր ներկայում առկա չէ:

Խորհրդի առաջարկը - «Բարձրացնել մնացորդային գումարի օգտագործման սահմանաչափը՝ հասցնելով հավաստագրի ընդհանուր գումարի առնվազն 50%-ին»:

Կառավարության արձագանքը - Առաջարկն ընդունելի է»:

ՀՀ Կառավարությունը պատրաստակամություն է հայտնել բնակարանային ծրագրի շրջանակներում քննարկել եւս մի քանի կետեր, որի մասին Խորհուրդն առաջիկա օրերին կհայտարարի: Սակայն, ինչպես Խորհուրդի անդամներն են նշում, ամենակարեւոր առաջարկները չեն ընդունվել Կառավարության կողմից: Քննարկումներ դեռ լինելու են, որոնց արդյունքում հնարավոր է դրական տեղաշարժ լինի:

Կառավարությունը սոցիալական մնացած ծրագրերի վերաբերյալ ներկայացված առաջարկներին ոչ մի շոշափելի դրական արձագանք չի տվել, իսկ զբաղվածության ծրագրերի բարելավման շուրջ քննարկումները, ինչպես Խորհուրդի անդամներն են նշում, դեռեւս դանդաղ են ընթանում՝ հատկապես բավարար տվյալների բացակայության պատճառով:

Առաջիկա օրերին բանակցությունների արդյունքում առանցքային հարցերի շուրջ հաջողության չհասնելու պարագայում՝ Խորհուրդը կդադարեցնի քննարկումները ՀՀ կառավարության հետ եւ կհայտարարի հետագա քայլերի մասին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 4 պատահար, 3 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՉԻ ԸՆԴՈՒՆԵԼ

Վրաստանի ֆիննախարարության եկամուտների ծառայության հաղորդմամբ՝ Հայաստանից ներմուծվող սեզոնային ծաղիկների 10 հազար միավորից բաղկացած խմբաքանակի մուտքը Վրաստան արգելվել է. պատճառը հայտնաբերված վնասատուներն են:

Հաղորդվում է, որ հայ-վրացական սահմանի «Սադախլո» մաքսակետում ծաղիկները ենթարկվել են ֆիտոսանիտարական ստուգման:

Ըստ վրացական կառավարության կարգավորումների՝ վարակված բուսական արտադրանքը ենթակա է վերադարձման արտահանող երկիր:

Հայաստանը Վրաստան ծաղկի հիմնական մատակարարներից է՝ Էկվադորից հետո:

«Սակստատ»-ի տվյալներով՝ 2024 թվականին Հայաստանից Վրաստան է ներմուծվել 3.2 մլն դոլարի ծաղիկ, իսկ 2025 թվականի առաջին չորս ամիսներին՝ 1.3 մլն դոլարի:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ

Ներքին գործերի նախարարությունը պարբերաբար ներկայացնում է կարգապահական հանձնաժողովի ծառայողական քննությունների արդյունքները:

Համակարգում կարգապահության եւ բարեվարքության խախտումներին արձագանքելու գործընթացի հրապարակայնությունը նախարարության որդեգրած սկզբունքներից է:

Կարգապահական հանձնաժողովի հերթական նիստը տեղի է ունեցել հունիսի 6-ին, որը վարել է հանձնաժողովի նախագահ, ՆԳ նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանը:

Մասնակցել են Փրկարար ծառայության տնօրենի տեղակալը, ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչության պետը, ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման եւ մոնիթորինգի վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարողը, ինչպես նաեւ ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր իրավաբանը եւ ՆԳՆ կարգապահական հանձնաժողովում ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Նիստի ընթացքում ուսումնասիրվել եւ քննարկվել են ոստիկանության ութ ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննության նյութերն ու եզրակացությունները:

ՆԳՆ կարգապահական հանձնաժողովը, փաստական հանգամանքները վերլուծելուց հետո, որոշում է կայացրել միջնորդել ծառայողական քննությունները նշանակած պաշտոնատար անձանց՝ ոստիկանության հինգ ծառայողի նկատմամբ կիրառել «Ոստիկանությունից ազատում», իսկ երեք ծառայողի նկատմամբ՝ «Խիստ նկատողություն» կարգապահական տույժերը:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

ԵՐԵԿ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՆ ԷՐ

Երեկ անվանի հայ կոմպոզիտոր, դիրիժոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Արամ Խաչատրյանի ծննդյան օրն էր: Մեծանուն կոմպոզիտորի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն այցելել են Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն, ծաղիկներ խոնարհել նրա շիրիմին:

ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնում են, որ ներկա են եղել նաեւ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի գործադիր տնօրեն Մարտին Թովմասյանը, Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սմբատյանը, անվանի դաշնակահար եւ դիրիժոր Վահագն Պապյանը, ինչպես նաեւ մրցույթի՝ արտերկրից ժամանած ժյուրիի անդամներ, մասնակիցներ, երաժշտարվեստի ներկայացուցիչներ, արվեստասերներ եւ դպրոցականներ:

Ներկաներն ընդգծել են Արամ Խաչատրյանի հարուստ ժառանգության վերաիմաստավորման ու նորովի գնահատման անհրաժեշտությունը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն այս համատեքստում կարեւորել է Արամ Խաչատրյանի անվան ամենամյա միջազգային մրցույթի անցկացումը՝ նշելով, որ այն ուղղված է ոչ միայն երիտասարդ եւ տաղանդավոր երաժիշտների բացահայտմանը, այլեւ Արամ Խաչատրյանի երաժշտական ժառանգության հանրահռչակմանը: Մրցույթը ընդգրկված է Ժնեւում հիմնված Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) ցանկում եւ գործում է WFIMC-ի սահմանած միջազգային չափանիշներին համապատասխան:

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Երեւանում կմեկնարկի Արամ Խաչատրյանի անվան 21-րդ միջազգային մրցույթը, որն այս տարի կանցկացվի «դիրիժորություն» մասնագիտական կարգում: Բացման հանդիսավոր արարողությանը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարմամբ, կներկայացնի Արամ Խաչատրյանի սիրված ստեղծագործություններից՝ հատվածներ «Սպարտակ» բալետից, Ջութակի կոնցերտը (մենակատար՝ ջութակահար Նին Ֆեն):

Մրցույթին կմասնակցի նախնական փուլում ժյուրիի կողմից ընտրված 18 դիրիժոր աշխարհի 12 երկրից՝ Ֆրանսիայից, Արգենտինայից, Հայաստանից, ԱՄՆ-ից, Հարավային Կորեայից, Լատվիայից, Թայվանից, Ավստրալիայից, Չինաստանից, Կանադայից, Մեծ Բրիտանիայից, Ճապոնիայից:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Հայկական արտադրանքից մեր տարածաշրջանում ամենամեծ պահանջարկն ունեն կոնյակը եւ կոնյակի սպիրտը: Այս մասին հունիսի 6-ին Երեւանում կայացած հայ-ռուսական 10-րդ միջտարածաշրջանային ֆորումի շրջանակներում լրագրողների հետ զրույցում հայտարարել է Ռուսաստանի Ստավրոպոլի մարզի նահանգապետ Վլադիմիր Վլադիմիրովը:

Վլադիմիրովը կոչ է արել ընդլայնել առեւտրային համագործակցությունը: «Մենք կցանկանայինք Հայաստանին մատակարարել ոչ միայն հացահատիկ, այլեւ պարարտանյութեր, եւ մենք կցանկանայինք մեր շուկայում տեսնել հայկական արտադրանք, այդ թվում՝ կաթնամթերք, քանի որ մենք այս ոլորտում դեֆիցիտ ունենք», - նշել է նա:

Պաշտոնյան ընդգծել է, որ տարածաշրջանի բնակիչների 10%-ը հայկական սփյուռքի ներկայացուցիչներ են: Սա ենթադրում է, որ հայերը ապահովում են տարածաշրջանի ՀՆԱ-ի 10%-ը: Դրանք բժիշկներ, ուսուցիչներ, ձեռնարկատերեր են: Կավմինվոդիում սննդի մատակարարման 30%-ը ապահովում է հայկական սփյուռքը», - նշեց նահանգապետը:

ԿԱԽՎԱԾ ԿՄՆԱ ԱՄՆ-ԻՑ

Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը կարծում է, որ Գերմանիան երկար ժամանակ կախված կմնա Միացյալ Նահանգներից: Նա այս կարծիքը հայտնել է Բեռլինում կայացած «Ընտանեկան բիզնեսի օր» համաժողովում ելույթ ունենալիս:

«Անկախ նրանից, թե դա մեզ դուր է գալիս, թե ոչ, մենք երկար ժամանակ կախված կմնանք Ամերիկայի Միացյալ Նահանգներից», - ասել է կանցլերը: Միեւնույն ժամանակ, Մերցը նշել է, որ «վերջին տարիներին շատերը, իբր, զուրկ են եղել Գերմանիայի առաջնորդական դերից»: «Եվ սա միայն վերջին երեք տարիներին չէր եղել [մյուս գերմանական կառավարության]», - նշել է նա:

«Գերմանիայի միավորումը անհնար կլիներ, եթե մենք չվայելեինք մեր եվրոպացի հարեւանների եւ գործընկերների՝ ամերիկացիների եւ այն ժամանակվա Խորհրդային Միության անվերապահ վստահությունը», - ասել է Մերցը: Նրա կարծիքով, Գերմանիան այժմ պետք է «վաստակի այս վստահությունը միջազգային ասպարեզում»:

Նա հայտնել է, որ անցյալ տարի այս ապրանքատեսակի ներմուծման ծավալը կազմել է 53 միլիոն դոլար: Նրա խոսքով՝ առեւտրաշրջանառության ընդհանուր ծավալը տարվա ընթացքում կրկնապատկվել է եւ գերազանցել 100 միլիոն դոլարը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՔԱՀԱՆԱՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԽՏՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԸ»

Արարատ քահանա Պողոսյանը Հայ Առաքելական Եկեղեցու հեղինակության դեմ բարձրացված հրապարակային մեղադրանքների առթիվ հայտարարությամբ է հանդես եկել:

«Վերջին օրերին Ն. Փաշինյանն իր հրապարակային հայտարարություններով կասկածի տակ է դնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ մեր ժողովրդի հոգեւոր հիմնասյան, հեղինակությունն ու պատիվը: Մասնավորապես՝Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված նրա հրապարակային «հորդոր»-ը, ըստ որի Վեհափառ Հայրապետը պարտավոր է պարզաբանել՝արդյոք խախտել է կուսակրոնության ուխտը եւ ունի զավակ, չի կարող դիտվել որպես անմեղ հարցադրում: Սա բացահայտ մերկապարանոց մեղադրանք է՝ առանց փաստերի, առանց իրավական ընթացակարգի, առանց հոգեւոր եւ բարոյական նվազագույն էթիկայի պահպանման:

Ն. Փաշինյանի հայտարարությունները բացեիբաց խախտում են այն սահմանը, որը պետք է պահպանվի պետության ու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու միջեւ՝ Սահմանադրությամբ ամրագրված «բաժանման» սկզբունքը: Դրանք նաեւ բռնանում են հավատացյալ ժողովրդի վրա՝նրանց ազգընտիր հոգեւոր Առաջնորդին ներկայացնելով հանրային քննադատության ու կասկածի տակ՝առանց արժանապատիվ իրավական կամ եկեղեցական քննության:

Հիշեցնենք, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի իր կանոնակարգերը, հոգեւոր-կարգապահական մարմինները եւ դարերով ձեւավորված ընթացակարգերը, որոնցով են կարգավորվում Եկեղեցու ներքին հոգեւոր եւ վարչական կյանքը, վարքն ու հնարավոր խախտումները: Կաթողիկոսը որեւէ պաշտոնյա չէ, որ նրան հրապարակային «հանդիմանությամբ» պարտադրվի արդարանալ: Եթե կան կասկածներ, դրանք պիտի ներկայացվեն իրավական հարթությունում կամ՝ եկեղեցական կանոնական ատյաններում, ոչ թե հրապարակային ճնշմամբ ու ամբոխահաճ ոճով:

Ն, Փաշինյանն իր այս քայլով ոչ թե պահանջում է ճշմարտություն, այլ սահմանում է ճշմարտության ձեւը՝ իր քաղաքական շահերին հարմարեցված: Իսկ ճշմարտությունը չի ծնվում ճնշման, վիրավորանքի եւ կասկածանքի հիման վրա: Այն պահանջում է բարոյական պատասխանատվություն, օրինականություն եւ հարգանք ինստիտուտների նկատմամբ:

Հավատացյալ ժողովուրդն էլ ունի իրավունք.

Ունի իրավունք՝տեսնելու, որ իր պետության ղեկավարը հարգում է իր դարավոր եկեղեցին:

Ունի իրավունք՝ վստահելու, որ հոգեւորի դեմ կիրառվող քաղաքական պայքարն անձնական չարության կամ ինքնիշխան հաստատության նվաստացման նպատակ չի հետապնդում:

Ունի իրավունք՝ ապրելու մի հասարակության մեջ, որտեղ Եկեղեցու եւ պետության սահմանները խիստ պաշտպանված են:

Այդ պատճառով կոչ ենք անում՝

Դադարեցնել Հայ Առաքելական Եկեղեցու եւ մասնավորապես՝ Կաթողիկոսի հեղինակությունը խաթարող հրապարակային սադրանքները:

Հարգել հավատացյալ ժողովրդի հոգեւոր իրավունքը՝ունենալու անխաթար եկեղեցի եւ Հովվապետ:

Եկեղեցին պատկանում է ժողովրդին՝ Աստծու կողմից հաստատված կարգով, ոչ մեկին չի տրվել մենաշնորհ՝նրա դեմ «հակաքարոզչություն» իրականացնելու: Այսօր, առավել քան երբեւէ, մեզ պետք է համերաշխություն եւ ոչ պառակտում:

Հ.Գ.

Լռությունը համաձայնության նշա՞ն է:

Ոչ միշտ:

Լռում ես, երբ իմաստ չունի հակառակվել:

Լռում ես, երբ դաստիարակությունդ թույլ չի տալիս վիճել:

Ի վերջո լռում ես, երբ ինքնահաստատման կարիք չունես:

Լռությունը խոհեմության նշան է: Միշտ: (Անհայտ հեղինակ)»,- նշել է Արարատ քահանա Պողոսյանը:

ԲԵՔՀԵՄԸ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

Ինչ Վիկտորիա Բեքհեմը շարունակում է դժվարին շրջան անցնել իր ավագ որդու՝ Բրուքլինի եւ նրա կնոջ՝ Նիկոլա Պելցի հետ հարաբերություններում, նրա կյանքում նոր հակամարտություն է բռնկվում՝ այս անգամ Spice Girls-ի կազմում:

Ըստ The Daily Mail-ի, խմբի նախկին մենեջեր եւ «Beckham ապրանքանիշի» ստեղծող Սայմոն Ֆուլլերը պլանավորում է 2026 թվականին նշել Spice Girls-ի 30-ամյակը բարձրակարգ շրջագայությամբ: Նա արդեն ունի Մել Սիի, Մել Բիի եւ Էմմա Բանտոնի աջակցությունը, եւ նա նաեւ փորձել է համոզել Ջերի Հոլիվել-Հորներին միանալ շրջագայությանը:

Սակայն, աղբյուրների համաձայն, Ջերին մտադիր չէ անձամբ բեմ բարձրանալ. նրան հետաքրքրում է միայն ավատարներով վիրտուալ շոուի ձեւաչափը, ինչպես վերջերս ABBA նախագիծը: Միեւնույն ժամանակ, Վիկտորիան, ինչպես պարզվում է, չի հրավիրվել:

«Սայմոն Ֆուլլերը խմբում եւս մեկ պառակտում է առաջացրել: Վիկտորիան զայրացած է, որ անդամները հետեւել են իրեն՝առանց իր հետ քննարկելու: Նա չի պատրաստվում մասնակցել որեւէ ձեւաչափի», - ասել է ներքին աղբյուրը:

Այս թշնամանքի պատճառը, ինչպես ասվում է, հին դժգոհություններն են. Բեքհեմների ընտանիքը միլիոններ է ծախսել Ֆուլլերի բաժնեմասը Beckham Brand Holdings-ում գնելու համար: Այնուամենայնիվ, նա դեռեւս պահպանում է ազդեցությունը նրա նորաձեւության բիզնեսի վրա:

«Նրանց միջեւ երկար ժամանակ լարվածություն է եղել: Ջերին ուզում է ավատարներ, նա չի ուզում շրջագայություն: Սա Ֆուլլերի առաջին գաղափարն է երկար ժամանակ անց, որը նրան իսկապես ոգեշնչել է: Եվ նա երբեք չի համոզելու Վիկտորիային», - հավելել է աղբյուրը:

Մինչդեռ, Մել Սին, Մել Բին եւ Էմմա Բանտոնը կնախընտրեին կենդանի ելույթ ունենալ, հատկապես 2019 թվականի հաջող մինի-շրջագայությունից հետո, որի տոմսերը վաճառվել էին: Այնուամենայնիվ, նույնիսկ Spiğe Girls-ի հանդիպումները բարդ են:

«Չկա նույնիսկ մեկ հանդիպում, որտեղ նրանք բոլոր հինգը նույն սենյակում լինեն նույն պահին. ցանկացած պահի նրանցից երկուսը վիճում են մյուսների հետ»:

Զարմանալի չէ, որ միայն Էմման եւ Մել Սին են ներկայացել Մել Բիի վերջերս Լիդսում կայացած 50-ամյակի երեկույթին: Համեմատության համար, Վիկտորիայի անցյալ տարվա ծննդյան երեկույթին խմբի բոլոր անդամներն էին ներկա:

Spice Girls-ը, կարծես, կրկին բաժանված է ճամբարների, եւ աղբյուրները պնդում են, որ Ջերին այժմ գլխավոր դեր է խաղում բանակցություններում:

«Սայմոն Ֆուլլերը միակն է, ով համոզել է Ջերիին, բայց նա երբեք չի համոզի Վիկտորիային»:

Լուրեր կան, որ Վիկտորիան ինքը ցանկություն չունի վերադառնալ փոփ երաժշտություն եւ կենտրոնացած է իր նորաձեւության ապրանքանիշի զարգացման վրա: Նրա համար Spiğe Girls-ը «հաճելի հիշողություն» է, այլ ոչ թե ներկայիս նախագիծ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՄԵՆԱՀՈՒՍԱԼԻ ԴԱՐՊԱՍԱՊԱՀԸ

«Նոայի» դարպասապահ Ալեքսեյ Պլոշադնին ճանաչվել է Fastex Պրեմիեր լիգայի 2024/25 մրցաշրջանի ամենահուսալի դարպասապահ: Նա 13 հանդիպումից 10-ում պահել է իր դարպասն անառիկ՝ընդունելով ընդամենը 3 գոլ:

Պլոշադնին սահմանել է պատմական ռեկորդ՝0.23 անխոցելիության գործակցով գերազանցելով «Փյունիկի» նախկին դարպասապահ Արմեն Ավագյանի ցուցանիշը: Նա նաեւ գրանցել է մրցաշրջանի ամենաերկար անխոցելիության շարքը՝616 րոպե առանց գոլ բաց թողնելու:

Այս ցուցանիշներով Պլոշադնին արժանացել է «Fastex Պրեմիեր լիգայի ամենահուսալի դարպասապահ» տիտղոսին եւ տեղ է գրավել մրցաշրջանի խորհրդանշական հավաքականում:

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Իտալացի մասնագետ Կառլո Անչելոտտին մեկնաբանել է Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզչի կարգավիճակով իր նորամուտի հանդիպումը:

2026 թվականի աշխարհի առաջնության ընտրական փուլի Էկվադորի դեմ խաղն ավարտվել է 0:0 հաշվով:

«Պայմանները բարդ էին, եւ դժվար էր ցուցադրել ներդաշնակ խաղ: Երկրորդ խաղակեսում Վինին եւ Կազեմիրոն լավ պահեր ունեին: Հարձակման գծում կարող էինք ավելի արդյունավետ գործել, սակայն պետք է հաշվի առնել մրցակցի ուժը:

Էկվադորը, ինչպես եւ մենք, լավ խաղ ցուցադրեց: Նրանք հիանալի էին պաշտպանվում, եւ մեզ համար դժվար էր եզրերի միջեւ տարածքներ գտնել: Հարձակման անցնելը բարդ էր, քանի որ միշտ չէ, որ հաջողվում էր մաքուր փոխանցումներով հասնել եզրափակիչ փուլ: Չեմ ցանկանում արդարանալ, բայց նման խաղադաշտում հեշտ չէր խաղալ», - մեջբերում է Անչելոտտիին Globo-ն:

ՈՐԱԿԱՋՐԿՎԵԼ Է

2024 թվականի նոյեմբերի 24-ին Սերիա D-ի շրջանակում կայացած «Միլան» - «Պրո Սեստո» հանդիպման գլխավոր մրցավար Գաբրիելե Կաջարին երկու տարով որակազրկվել է: Այս մասին հայտնում է Gazzetta dello Sport-ը:

«Պրո Սեստոյի» կիսապաշտպան Ալեսանդրո Սալան խաղի ընթացքում խնդրել է փոխարինել իրեն՝պատճառաբանելով, որ մրցավարը վիրավորական արտահայտություններ է հնչեցրել իր հասցեին: Ֆուտբոլիստի խոսքով՝ վեճի ժամանակ Կաջարին իրեն քաղցկեղ է մաղթել:

«Կյանքը մեզ տալիս է եւ՛ ուրախություն, եւ՛ կարեւոր պահեր, բայց նաեւ փորձություններ: Ես ցանկանում էի ժպիտով հիշել մորս՝ուժեղ եւ վճռական կնոջ, որը պայքարում էր քաղցկեղի դեմ եւ միշտ զոհաբերությունների էր գնում հանուն իր երեխաների: Վերջին խաղում տհաճ միջադեպ տեղի ունեցավ:

Կարծում եմ՝ նախքան նման խոսքեր ասելը պետք է մտածել դրանց լրջության մասին, հատկապես, երբ դու ներկայացնում ես մարդկանց, ովքեր պարտավոր են խաղադաշտում պահպանել հարգանքն ու կանոնները», - գրել է Սալան:

● Հունիսի 19-ին՝19:30-ին, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Անհայտ բաժանորդ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4.000-20.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես են հաշվարկվում խնամատար ընտանիքին երեխային պահելու համար տրվող ամսական դրամական միջոցները:

Ամալիա Միրզոյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ խնամատարության բոլոր տեսակների համար յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության համար տրամադրվող միջոցների ամսական չափը կազմում է տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով մեկ երեխայի խնամքի համար մանկատներում նախատեսված գումարի չափ: Ընդհանուր տիպի խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց տրվող վարձատրության ամսական չափը կազմում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Մասնագիտացված խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց տրվող վարձատրության ամսական չափը կազմում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի եւ 30 տոկոս հավելավճարի չափով:

Ճգնաժամային եւ արձակուրդային խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց վճարումն իրականացվում է երեխայի փաստացի խնամված օրերի թվով՝ համաձայն պարզ հաշվարկի՝ ամսական աշխատավարձն ամսական միջին օրերի (30.4) վրա բաժանելու հաշվարկով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար խնամատար ծնողը ստանում է 100 տոկոս աշխատավարձ եւ խնամքի եւ դաստիարակության համար տրվող գումար:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես են հաշվարկվում խնամատար ընտանիքին երեխային պահելու համար տրվող ամսական դրամական միջոցները:

Ամալիա Միրզոյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ խնամատարության բոլոր տեսակների համար յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության համար տրամադրվող միջոցների ամսական չափը կազմում է տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով մեկ երեխայի խնամքի համար մանկատներում նախատեսված գումարի չափ: Ընդհանուր տիպի խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց տրվող վարձատրության ամսական չափը կազմում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Մասնագիտացված խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց տրվող վարձատրության ամսական չափը կազմում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի եւ 30 տոկոս հավելավճարի չափով:

Ճգնաժամային եւ արձակուրդային խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց վճարումն իրականացվում է երեխայի փաստացի խնամված օրերի թվով՝ համաձայն պարզ հաշվարկի՝ ամսական աշխատավարձն ամսական միջին օրերի (30.4) վրա բաժանելու հաշվարկով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար խնամատար ծնողը ստանում է 100 տոկոս աշխատավարձ եւ խնամքի եւ դաստիարակության համար տրվող գումար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանում արդեն մեկնարկել է գինու փառատոնը՝ Yerewine-ը: Առաջիկա երկու օրերին եւս քաղաքում սպասվում են գինեգույն միջոցառումներ, գինու համտեսներ եւ լավ տրամադրություն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+7 + 10 + 16+ 19
Կոտայքի լեռներ	+9 + 12 + 16+ 19
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 10 +16 + 18
Գեղարքունիք	+10+ 15 + 17+ 21
Լոռի	+ 6 + 10 +15 + 18
Տավուշ	+ 9 + 12 +18 + 22
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+12 + 15 +18 + 24

Արարատ	+10 + 13 + 20+ 25
Արմավիր	+9 + 12 + 20+ 24
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 14+ 19
Վայոց ձորի նախալեռներ	+9 + 13 +19 + 24
Սյունիքի հովիտներ	+10+ 13 + 22+ 26
Սյունիքի նախալեռներ	+7 + 10 +16 + 19
ԼՂՀ	+ 6 + 9 +13 + 17
Երեւան	+9 + 11 +20 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.6.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*